

ՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ

Մարդիկ զիւրույթեամբ կը հնազանդին անոնց, որոնցմէ կը վախճան որպէսզի որեւէ վնաս չկրեն: Բայց եթէ վնասը հոգեւոր է, պէտք չէ վախի հնազանդիլ, որովհետեւ աւելի լաւ է կորսնցնել ունեցուածք, փառք ու մարմնաւոր կեանք, քան հոգին:

Հլու հնազանդ մարդը եթէ կ'ուզէ մեռնիլ, անոր համբաւը ու փառքը որ անոր հնազանդութեան պտուղն են՝ անմահ կը մնան: Որովհետեւ թէեւ ան այս աշխարհէն կը մեկնի, բայց բազում կենդանի բարի գործեր կը ձգէ, որոնք հնազանդութեամբ սորվեցաւ կատարել: Մարդու փառքը գործն է, եւ մարդիկ գործերով կը զանազանւին, որովհետեւ մարդկային բնութեամբ ամէնքն ալ նոյնն են:

Բռնի հնազանդութիւնը իր հետ կը կրէ գաղտնի ապստամբութիւն, որովհետեւ նուաճողը յարմար ժամանակ կը փնտռէ բռնի լուծէն ազատելու եւ երկուքն ալ մտքով կը տանջուին: Բռնակալը՝ որպէսզի թոյլ չտայ ապստամբելու, եւ նուաճողը թէ՛ բռնութենէն ի՞նչպէս ազատի: Ասիկա չարաչար հնազանդութիւն է, որ աւելի անարգանք է, քան գերութիւն:

Մանուկները պարտաւոր են սիրով ու զուարթութեամբ հպատակիլ իրենց ծնողներուն, ուսուցիչներուն, եղբայրներուն կամ խնամածուններուն բոլոր հրահանգներուն՝ առիթ չտալով անոնց զայրոյթին:...

Հարունակելի

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՈՂԻՆԵՐԸ, ԳԵԻՐԸ, ՉԱՐ ՈՒԺԵՐԸ՝ ՀՈԳԵՒՈՐ ԳԻՏԱՆԿԻՒՆԷՆ

ԿԱՆԱՐԳՈՒԹԵԱՆ ՀՇՏԵՒԱՆՔՆԵՐ

ՍՐԵԱՊՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Ոմանց պարագային՝ զիրենք կը հետապնդեն սրբապիղծ մտածումները, որոնք ուղղուած են Աստուծոյ, Փրկչին եւ Սուրբ Հոգիին դէմ: Օրինակներ պիտի չբերեմ: Չեմ ուզեր գայթակղեցնել ձեզ, որովհետեւ սատանան հաճոյքով կ'օգտագործէ զանազան գէշ խօսքեր, զանոնք ամրացնելով մարդուս յիշողութեան մէջ: Իսկ յետոյ այնքան ալ դիւրին չըլլար անոնցմէ՛նք անբազատիլ: Անոնք որոնք նման մտածումներէ կը տատային, կ'ըսեն. «Չեմ ուզեր այդպէս մտածել. ասիկա իմ սրտէս չէ՛ որ կը ք»

.Օյսի»: Սարսափելի է, երբ գէշ մտածումները այնպէս կու գան, որ կարծես մէկը ականջիդ շնչացեր է: Յատկանշական է, որ անոնք աւելի յաճախ կու գան՝ երբ մարդս կ'աղօթէ Աստուծոյ, կամ Աստուածաշունչ կը կարդայ, կամ եկեղեցիին մէջ ուշադրութեամբ Աստուծոյ խօսքը կը լսէ: Սատանան յաճախ չար մտածումներով կ'այցելէ այդպիսի մարդոց, եւ անոնք ստիպուած կ'ըլլան ձգելու եկեղեցի, Աստուծոյ խօսքին ընթերցումը, կը դադրին աղօթել, պարգապէս որպէսզի սրբապիղծ մտածումները զիրենք չտանջեն: Ատով իսկ թշնամին կը հասնի իր նպատակին, քանի որ Աստուծոյ որդիները կը դադրին իրարու հետ ինչպէս նաեւ Աստուծոյ հետ հարոյրակցել:...

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 - Tel/Fax: 01-258300 - E-mail: jerak@live.com



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ԲՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՈՏԲԵՌՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս., 119-105)

Ե. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ՝ 17 ՅՈՒՆԻՍ, 2012

ԹԻՒ 25

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՏԹԷՍԻ

12.1-8

Շաբաթ օր մը Յիսուս արտերուն մէջէն կ'անցնէր: Աշակերտները անօթեցած ըլլալով սկսան հասկ փրցնել եւ ուտել: Երբ փարխեցիները ասիկա տեսան, ըսին Յիսուսի. «Տէ՛ս, աշակերտներդ ի՞նչ կ'ընեն. բան մը՝ որ արգիլուած է Շաբաթ օրով ընել»:

Յիսուս պատասխանեց. «Չէ՞ք կարդացած թէ ի՞նչ ըրաւ Դաւիթ, երբ ինք եւ իր հետ եղողները անօթեցան: Աստուծոյ տունը չմտա՞ւ եւ Առաջաւորութեան հացը չկերա՞ւ, որ օրէնքին համաձայն միայն քահանաներուն արտօնուած էր եւ ո՛չ թէ իրեն կամ իր հետ եղողներուն: Կամ չէ՞ք կարդացած Մովսէսի Օրէնքին մէջ, թէ Շաբաթ օրեր քահանաները տաճարին մէջ կը սրբապղծեն Շաբաթը եւ սակայն ասիկա մեղք չի համարուիր իրենց: Ահա կ'ըսեմ ձեզի, որ տաճարէն աւելի մեծ մէկը կայ հոս: Եթէ իրապէս հասկնայիք թէ ի՞նչ կը նշանակէ մարգարէին խօսքը. «Ողորմութիւն կ'ուզեմ եւ ոչ զոհ», այն ատեն չէ՛իք դատապարտեր անմեղները, որովհետեւ մարդու Որդին Տէրն է Շաբաթին»:

Ի՞նչն է քեզի համար լաւ բանը

Օր մը երկինքով չհետաքրքրուած մարդու մը հարց տուի. «Ի՞նչն է քեզի համար լաւ բանը»: Ան պատասխանեց. «Դիրքն ու դրամը»: Ան ինքզինք խաբած պիտի ըլլար եթէ տարբեր պատասխան տար: Իսկ դուն, սիրելի ընթերցող, ի՞նչն է քեզի համար կարեւոր բանը. դիրքն ու դրամը, թէ՛ Յիսուսի սէրն ու խաչը: Դիրքն ու դրամը չեն կրնար քեզի խաղաղութիւն տալ եւ հանգիստ շնորհել: Կրնաս մեծ գումարներ ունենալ բայց նոյնքան ալ մեծ մտահոգութիւններ: Կրնաս բարձր դիրքերու հասնիլ բայց երբեք ալ հանգիստ չգտնել: Աստուծոյ գաւակներէն շատե՛ր ո՛չ դիրք ունէին եւ ո՛չ ալ դրամ, բայց եւ այնպէս, ունէին ներքին խաղաղութիւն մը որ զիրենք անյաղաքաբար կը դարձնէր:

**ՀԱՅՈՑ ՄՐՏԻ ԼՈՒՍԱԽՈՐԻՉ
ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ**

Ներսէս Հայրապետ կաթողիկոս ձեռնադրուեցաւ 353 թուականին, Արշակ Բ. թագաւորի օրով: Ան թագաւորին քարտուղարն էր, սակայն Փառէն Աշտիշատեցի կաթողիկոսի մահէն ետք թափուր մնացած հայրապետական աթոռին համար արժանաւոր մէկը պէտք էր ընտրել: Այս արժանաւոր անձը հանդիսացաւ Յուսիկ Հայրապետի թոռը՝ Ներսէս:

Պատմութիւնը Ներսէս Հայրապետին ընծայած է ՄԵՇ Տիտղոսը իր կատարած մեծ գործերուն եւ բարեկարգութիւններուն համար: Հիմնական նպատակն էր հայ ժողովուրդի սրտին մէջ փրստոնէական ազնիւ զգացումները ներմուծել եւ արմատացնել: Այսպէս օրինակ, կը փառաբերէր իր ժողովուրդը որ հեթանոսական սովորութեամբ մահուան առջեւ անյոյս չողբան, այլ՝ յարութեան յոյսով երկնքի արձայութեան հաւատան: Անդադար կը փառաբերէր, որ մարդիկ բարեգործութիւն կատարեն եւ օրինակը ինքն իսկ տալով, իր տան մէջ կը հոգար որբերն ու չճաւորները:

Մեծն Ներսէս կաթողիկոս իր պաշտօնին գլխուն անցնելով մեծ բարեկարգութիւններու ձեռնարկեց:

Անհամար վանքերու, դպրոցներու, որբանոցներու հիմնադրութիւնը իր աշխատանքին մէկ բաժինն էր: Ան կազմակերպեց հայ եկեղեցական դասը, փահանաներ, եպիսկոպոսներ եւ փարոզիչներ ամէն կողմ դրկելով: Կանոնաւորեց եկեղեցիներու արարողութիւնները եւ որոշ օրեր ու ժամեր նշանակեց անոնց գործադրութեան համար:

Ահա իր այս բարեսիրական գործերուն շնորհիւ է, որ ան դարձաւ Հայոց սրտի լուսաւորիչ:

**ՀԱՐՑՈՒՄ-ՊԱՏԱՄԻԱՆ
ԲԱԺԻՆ**

**ԻՆՉՈ՞Ւ ԿԸ ՍԻՐԵՆՔ
ՉԱՍՏՈՒԱԾ**

Մենք ինչո՞ւ կը սիրենք զԱստուած: Որովհետեւ բարերար է եւ մենք իր բարերարութեան կարի՞՞քը ունինք, կամ որովհետեւ ամենակարող է, եւ մենք չե՞նք կրնար իր կամքին հակառակ կենալ, կամ որովհետեւ մեր յաւիտեանականութիւնը իրմէ կախեալ է անո՞ր համար պէտք է սիրենք զինք: Եթէ այս պատճառներով է որ զինք կը սիրենք՝ կե՞ղծ է մեր սէրը: Անկեղծ սէրը՝ առանց պայմանի, անսակարկ եղող սէրն է:

**ԻՆՉՈ՞Ւ ԿԸ ՀԵՏԱՊՆԳԵՍ
ՆՄԱՆԳ**

Սատանան եւ անոր կամքը ընող մարդիկ կը հետապնդեն մեր փայլերը, որպէսզի թակարդեն մեզ: Աստուած ի՞նքն էս կը հետապնդէ մեր փայլերը, բայց ո՛չ թէ թակարդելու մեզ, այլ՝ մեզ Չարին թակարդէն ազատելու: Իսկ դուն, եթէ մամնիդ փայլերը հետապնդող մըն ես, ի՞նչ նպատակով կ'ընես այդ մէկը:

**ՆԵՂՈՒԹԻՆՆԵՐՈՒ ՄԵՃ ՉԱՍՏՈՒԱԾ
ԿԱՆՉԵԼՈՒ ԱՂՕԹՔ**

Ո՛վ Հայր եւ Աստուած, որ գթառատ ես եւ ամէն տեսակի միտքարութիւն պարգեւելով մեզ կը միտքարես մեր բոլոր նեղութիւններուն մէջ: Այս պահուն լսէ՛ քու ծառաներուդ պաղատալից ինչորանքն եւ ընդունէ՛ մեր աղաչանքը: Դուն՝ որ բարերար ես, ջնջէ՛ մեր յանցանքներուն արժանի աստուոր պատիժը: Ներողամիտ գտնուէ՛ եւ լսէ՛ մեզ, քաւէ՛ եւ ներէ՛ մեր մեղքերը: Արժանի ըրէ՛ գուհութեամբ փառաւորելու քեզ՝ Հօրը եւ Միածին Որդիին հետ միասին. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ

**ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ
ՆԱՄԱԿ ՓՈԽ ԳՐԱՄԻ ԵՒ
ՏՈԿՈՍԻ ՄԱՍԻՆ**

Մի՛ Խորհիր յափշտակութեամբ հաւաքելու եւ ապա մեղքերուդ թողութեան համար ողորմութիւն ընել, որովհետեւ կրակը երբեք կարելի չէ կրակով մարել, վերքը վերքով բուժել, մեղքը մեղքով սրբել, կամ անօրէնութիւնները անօրէնութեամբ քաւել, որովհետեւ տոկոսներու անօրէնութիւնները շատ գէշ են ու անոնց յանձնառութիւնները նման են յղի կնոջ երկունքին: Աւելին՝ երբ պարտապանը աղքատ է, հետեւաբար հոգ կ'ընէ ու կը մաշի, գիշերը քուն չունի եւ կամ անհանդարտ քուն մը ունի, իսկ ցերեկը, տխուր, մեղամաղձոտ եւ մտահոգ կերպով կ'երթայ ու կու գայ եւ չի գիտեր թէ ուր կ'երթայ: Երբեմն իր ինչքերէն մաս մը կ'ուզէ ծախել՝ փոխ առած դրամին տոկոսը հատուցանելու համար, երբեմն հոգին կորսնցնելու եւ Աստուծոյ ընդդիմանալու գնով՝ կ'ուզէ անօրէն կերպով գողութիւն ընել, որպէսզի կարողանայ վաշխառուին տոկոսը հատուցանել, եւ երբեմն կը մտածէ գաղտնօրէն փախչիլու եւ հեռու երկիր մը երթալ: Իր պատկերուն սաստիկութեան պատճառաւ թափառականի մը նման կը դեգերի, բազմաթիւ խառն մտածումներու կ'ենթարկուի եւ իր անհանգիստ մտքին պատճառաւ կը մտնայ Աստուծոյ աղօթելու: Երբ ոտնաձայն մը լսէ, վախէն, սրտաբեկ կ'ըլլայ ներսը. եթէ պարտապանը վաշխառուն տեսնէ դուրսը կը պահուրտի, ինչպէս որ պիտի ընէր անակնկալ աղէտի մը դիմաց, իսկ սիրտը սպասողական վիճակի մը մէջ կը դողայ, իսկ ինք կանգնած կը մնայ գլխիկոր ու պապանձած. վաշխառուին ո՛չ կրնայ եւ ո՛չ ալ կը համարձակի նայիլ, որովհետեւ չունի տալիք:

(Ճառեր Յովհան Մանդակունի)

ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԳԱՏՈՒ

**ԽՐԱՏ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ
ՍԱՍԻՆ**

Փրստոնէութեան սկիզբը եւ գրելու մկրտութիւնն է, որ ժողովրդական բառով կնունք ալ կ'ըսուի:

Մկրտութիւնը վերստին եւ հոգեւոր ծնունդ է, ինչպէս Քրիստոս ըսաւ. «Եթէ մէկը վերստին չծնի հոգիէն ու ջուրէն, Աստուծոյ արձայութիւնը չի մտնիր» (Յով. Գ. 5): Վերստին ծնունդ կ'ըսուի. որովհետեւ ան որ անգամ մը մարմնաւոր ծնողներէ մարմնով ծնած է, որ աստուոր ծնունդ է, երկրորդ անգամ հոգեւոր ծնողներէ կը ծնի՝ հոգեւոր եւ աստուածային ծնունդով: Այս ծնունդին հայրը Աստուած է, մայրը՝ եկեղեցին եւ արգանդը՝ Աւագանը, որ մանուկը ջուրով ու հոգիով կը ծնի:

Ինչպէս որ ջուրը կը լուայ ու կը սրբէ մարմնին աղտը, նոյնպէս Սուրբ Հոգին կը սրբէ ու կը մաքրէ հոգին եւ Աստուծոյ տաճարի կը վերածէ:

Միւռոնը ջուրին վրայ խաչածն կը կաթեցնէ: Միւռոնը կը խորհրդանշէ Քրիստոս, իսկ խաչածնը՝ Քրիստոսի խաչը: Ինչպէս որ Քրիստոս խաչով մեռաւ, նոյնպէս Քրիստոնեան աւագանին մէջ խորհրդաբար Քրիստոսի հետ խաչակից կ'ըլլայ, աշխարհին ու մեղքերուն դէմ կը մեռնի եւ բարեգործութեամբ միայն կենդանի կը դառնայ Քրիստոսի: Քահանան մանուկը երեք անգամ ջուրին մէջ կ'ընկղմէ, որ կը խորհրդանշէ Քրիստոսի երօրեայ թաղումը, որպէս թէ ատով կը թաղուի Քրիստոսի հետ: Ջուրէն դուրս բերելով՝ Քրիստոսի հետ յարութիւն կ'առնէ: Վերը բեմ հանելով՝ Քրիստոսի հետ երկինք կը համբառնայ, որովհետեւ բեմը երկինքի օրինակն է: Հաղորդելով՝ կը միանայ Քրիստոսի, ինչպէս ինքն իսկ ըսաւ, «ով որ ուտէ մարմինս եւ խմէ արիւնս, ան մէջս պիտի բնակի եւ ես իր մէջ» (Յովհաննու 6.56)

Յովհաննէս Երզնկացի

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵԻՆ ԳԻՐՔԷՆ

1.2-15

Լսէ՛, ով երկինք, ականջ դիր, ով երկիր, որովհետեւ Տէրը կը խօսի. «Զաւակներ ծնայ եւ մեծցուցի, բայց անոնք զիս ուրացան: Նոյնիսկ եզր զինք պահողը կը մանչնայ, էշը գիտէ իր տիրոջ մտուրը, բայց Իսրայէլ իր Տէրը չի մանչնար, իմ ժողովուրդս չի հասկնար զիս»:

Ո՛վ մեղաւոր ազգ, անօրէնութեամբ լի ժողովուրդ, չար սերունդ, դո՛ւք, անօրէն գաւակներ: Լեւեցիք Տէրը, բարկացուցիք Իսրայէլի Սուրբը, օտարացաք եւ կոնակ դարձուցիք:

Զի՞ բաւեր ձեր ստացած հարուածը, որ տակաւին կը շարունակէք ձեր մեղքերուն մէջ մնալ: Ահա հիւանդ էք գլխովին եւ տրտում էք սրտովին. ոտքէն մինչեւ գլուխ առողջ տեղ չէ մնացած. վերքով, ուռեցքով ու թարախալից պայարներով ծածկուած էք, որոնք կը մնան առանց սպեղանիի, ձեթի կամ վիրակապի:

Ձեր երկիրը աւերակ դարձած է, ձեր քաղաքները հրկիզուած, ձեր աչքին առջեւ օտար ազգեր կ'աւարեն, կ'աւերեն ու կը կործանեն ձեր աշխարհը:

Սիռնի դուստրը՝ Նրուսադէմը միայն մնացեր է, այն ալ պաշարուած ու լքուած, նման՝ կութէն վերջ այգիին մէջ լքուած պահապանի հիւղակին, կամ սեխաստանին մէջ թողուած մրգապահներու ծածկին:

Եթէ Երկնային Զօրքերու Տէրը մեզմէ մնացորդներ պահած չըլլար՝ Սողոմի կամ Գոմորի նման կորսուած պիտի ըլլային:

Շարունակել Աստուածաշունչէն

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿ

ՅՈՍԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ

6.12-23

Այսուհետեւ մեղքը թող չթագաւորէ ձեր մահկանացու մարմիններուն մէջ, զանոնք իր ցանկութեանց հնազանդեցնելով: Մեղքին անձնատուր մի՛ ըլլաք, ձեր անդամները անիրաւութեան գործիք դարձնելով, այլ որպէս մահուրնէ կեանքի եկած մարդիկ՝ դուք ձեզ Աստուծո՛յ յանձնեցէք եւ ձեր մարմինները Աստուծոյ ձեռքին մէջ արդարութեան գործիք դարձուցէք: Մեղքը ձեր վրայ պէտք չէ իշխէ, քանի դուք օրէնքին ենթակայ չէք, այլ շնորհքին:

Ուրեմն ի՞նչ. քանի շնորհքին ենթակայ ենք եւ ո՛չ օրէնքին, մե՞ղք գործենք: Բնա՛ւ երբեք: Լաւ գիտցէք թէ որո՛ւ ծառայութեան որ նուիրուիք եւ հնազանդիք՝ անոր ծառան եղած կ'ըլլաք: Մեղքին ծառայելով՝ մահուան կ'ենթարկուիք, մինչ Աստուծոյ հնազանդելով՝ կ'արդարանաք: Գոհութի՛ւն Աստուծոյ, որ թէեւ ժամանակ մը մեղքին ծառայ դարձած էիք, բայց որովհետեւ սրբտանց հնազանդեցաք ձեզի աւանդուած վարդապետութեան օրինակին, մեղքի տիրապետութենէն ազատեցաք եւ արդարութեան ծառայ դարձաք: Ծառայի օրինակով կը խօսիմ, որովհետեւ այդպէս աւելի հասկնալի է ձեզի: Ինչպէս որ ժամանակ մը ձեր մարմինները անօրէնութեան տուած՝ պղծութեան եւ անօրէնութեան կը ծառայէիք, այնպէս ալ հիմա սրբութեան տուէք ձեր մարմինները եւ արդարութեան ծառայեցէք:

**ՀԱՐՈՒՆԱԿԵԼ
ԸՆԹԵՐՑՄՆՈՒԹԻՒՆԸ
ՄՍՏՈՒՄԾԱՇՈՒՆԶԷՆ:**